ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2021/24

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոք բերող՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ

Մասնակցությամբ՝

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի տնօրեն՝ Ս. Հայրապետյանի, ներկայացուցիչ՝ Ա. Պողոսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 30.03.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2021թ.-ի որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 10-րդ չափաթաժնի մասով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 26.03.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 29.03.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/4586-2021 գրությամբ բողոքը վերադարձվել է՝ բողոքում առկա թերությունները վերացնելու համար:

Ընկերությունը 30.03.2021թ.-ին ներկայացրել է բողոքի շտկված տարբերակը:

Բողոքներ քննող անձը 31.03.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/4769-2021 գրությամբ հայտնել է, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 10-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու պահանջը առարկայազուրկ է, ուստի Ընկերության կողմից 30.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վարույթ ընդունելը՝ վերոնշյալ պահանջի մասով մերժվել է:

31.03.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/24 համարի ծածկագիրը:

08.04.2021թ.-ին, 15.04.2021թ.-ին, 23.04.2021թ.-ին և 29.04.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 23.04.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 29.04.2021թ.-ին:

2. «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն 31.03.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ՝ «Պատվիրատու») հայտարարել է գնանշման հարցում (ընթացակարգի ծածկագիրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10»)՝ ՀՀ պաշտպանության նախարարություն կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով (այսուհետ՝ «Ընթացակարգ»): Ընթացակարգի շրջանակներում գնման առարկա է հանդիսացել Պատվիրատուի կարիքների համար ստորև նշված ապրանքների ձեռքբերումը, որոնք խմբավորված են 15 չափաբաժիններում՝

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	*Կիսավարտիք՝*
2	*Կիսավարտիք՝*
3	*Գուլպա՝ բամբակյա*
4	*Գլխարկ՝ կիսաբրդյա*
5	*Բաճկոն անթև՝ սեզոնային*
6	*Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա*
7	*Հողաթափ՝ զորանոցային*
8	*Գոտի լայն*
9	*Գոտի՝ տաբատի*
10	*Կաթսա /կոտելոկ/՝ այլումինե*
11	*Բարձ՝ (58Х48) սմ,*
12	*Ներքնակ՝ (187х65х5)սմ,*
13	*Ներքնակ՝ (185Х 65 Х 7,0) սմ*
14	*Սավան՝ բամբակյա*
15	*Սավան՝ բամբակյա*

Ինչպես երևում է, Ընթացակարգը՝ 10-րդ չափաբաժնի մասով, վերաբերվում է այլումինե կաթսաների (կոտելոկ) ձեռքբերմանը:

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») հայտ է ներկայացրել՝ Ընթացակարգին՝ 10-րդ չափաբաժնի մասով մասնակցելու նպատակով, որը գնահատման հանձնաժողովի (այսուհետ՝ «Հանձնաժողով») 16.03.2021թ. որոշմամբ մերժվել է:

Նախ հարկ եմ համարում տեղեկացնել, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն հանդիսանում է ՀՀ ՊՆ և մյուս ոչ առևտրային կազմակերպությունների մատակարարը շուրջ 29 տարի: Ընկերությունը ունի առևտրային հարաբերություններ նաև շուկայի հետ: Հարկերը և տուրքերը միշտ վճարել է ժամանակին, անգամ ունեցել է գերավճարներ: Ընկերությունը հիմնականում գոյատևում է պետ. պատվերների շնորհիվ: Սույն թվականի մարտի 3-ին մասնակցել ենք ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից հայտարարված ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10 ծածկագրով Ընթացակարգի 10-րդ չափաբաժնին,

այն է կաթսա ալյումինե (կոտելոկ): Ներկայացված տեխնիկական բնութագրի մեջ լրացրել ենք բոլոր պահանջվող տվյալները, որտեղ չի համընկել կաթսայի հաստության չափը: Պատվիրատուն կաթսայի հաստությունը նշել է 2մմ, իսկ ներկը՝ հրակայուն: Մնացած բոլոր պարամետրերը համընկնում են: Նշեմ, որ 2018, 2019, 2020թթ-ներին Պաշտպանության նախարարությանը մատակարարված նույն ապրանքը արտադրել է մեր ընկերությունը, որտեղ կաթսայի հաստությունը և ներկի հրակայունությունը նշված չի եղել: Կաթսան մեր կողմից պատրաստվել է 1.5մմ պատի հաստությամբ, իսկ ներկը փորձարկվել է մինչև ջրի եռման աստիճանը 100°C, որից հետո հաստատվել է կաթսայի նմուշը և այն մատակարարվել ՀՀ ՊՆ-ին: Նույնանման կաթսա արտադրվում է Ռուսաստանում, Չինաստանում և այլն, նրանց մոտ կաթսայի պատի հաստությունը 1.2մմ է, իսկ ներկը նույն ներկն է, որը օգտագործում ենք մենք: Հաշվի առնելով համարժեք բառի առկայությունը և մտածելով գուցե տպագրական սխալ է եղել և պատվիրատուն գնահատող հանձնաժողովի որոշմամբ դա կարող է ուղղել, որոշեցինք մասնակցել Ընթացակարգին, սակայն հայտը մերժվեց:

Գտնում եմ, որ Ընկերության հայտի մերժումը Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ:

Հրավերի համաձայն Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով ներկայացվել էին հետևյալ պահանջները:

« … 10. Կաթսա ալյումինե (հատ)

… Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս: Կաթսայի (տակամասի) տարողությունը առնվազն 1,05 լ, կափարիչի տարողությունը՝ առնվազն՝ 0,4 լիտր: Բաղկացած է երկու մասից՝ կաթսայից և կափարիչից: Կաթսային ամրացվում է մետաղալարից բռնակ, որի միջնամասը՝ կամարաձև: Կափարիչին ամրացված է բռնակ-փական, ընդ որում բռնակի ընդհանուր երկարությունը 15 սմ, իսկ հիմնական լայնությունը 2 սմ: Կափարիչին ամրացվող մասը՝ 4,5 սմ լայնության և 1,5-1,8սմ երկարության, իսկ փականը ծալված դեպի ներս, զսպանակաձև՝ 3 սմ երկարությամբ:Արտաքին մասը ներկված՝ պաշտպանական գույնի հրակայուն ներկով: Ներսամասը պատված քսուկով: Մնացած բոլոր պարամետրերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք»:

Հայտը մերժվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 42-րդ կետով նախատեսված հիմքով՝ արձանագրելով հետևյալ անհամապատասխանությունը՝

«-Ընթացակարգի հրավերում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է <Պատրաստվում է սենդային այլումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս>, իսկ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ <Պատրաստվում է սենդային այլումինից, հաստությունը 1.5-2մմ>, այսինքն Ձեր առաջարկած տեխնիկական բնութագիրը տվյալ չափորոշիչի մասով չի համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին:

- Ձեր կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է <Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք>, այնինչ անհրաժեշտ էր բացառել /կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը»:

Ինչպես երևում է Հանձնաժողովը հայտը մերժել է այն պատճառաբանությամբ, որ կաթսայի պատերի հաստությունը հայտում նշված էր ոչ թե «2 մմ-ից ոչ պակաս», այլ «1,5 2մմ», ինչպես նաև բացառված չէր «կամ համարժեք» արտահայտությունը:

Կաթսայի պատերի հաստության հետ կապված պատճառաբանությամբ Ընկերության հայտի մերժումն անհիմն է, որովհետև ՀՀ պաշտպանության նախարարությունն իր 26.03.2021թ. N 514/813 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչություն ներկայացված «կաթսա (կոտելոկ)» ապրանքատեսակի գնման հայտի տեխնիկական բնութագրում (Ընթացակարգի ծածկագիր՝ ԳՀԱՊՁԲ-21-7/10) կատարվել է գրասխալ՝ «հաստությունը 1.5-2մմ-ից ոչ պակաս» բառակապակցության փոխարեն տպագրվել է «հաստությունը 2մմ-ից ոչ պակաս»:»: Այլ կերպ ասած՝ Ընկերությունը, Հանձնաժողովի արձանագրած անհամապատասխանության հետ կապված, տվյալ դեպքում որևէ մեղք չունի և չի կարող կրել դրանից ածանցյալ անբարենպաստ հետևանքները:

Ինչ վերաբերվում է «կամ համարժեքը» արտահայտության բացառմանը, ապա այդ մասով Ընկերության հայտի մերժումը, նույնպես, անհիմն է, որովհետև տեխնիկական բնութագրում ուղղակիորեն նշված է՝ «Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք», իսկ հաշվի առնելով այն, որ Ընկերության առաջարկած ապրանքն արտաքին տեսքով համարժեք էր տեխնիկական բնութագրում նկարագրված ապրանքին, ուստի Ընկերությունը հիմք չուներ այն բացառելու: Այլ կերպ ասած՝ հրավերի պայմաններն ուղղակիորեն թույլ էին տալիս առաջարկել համարժեք ապրանք, ինչն էլ Ընկերությունը կատարել է:

Շարադրվածից հետևում է, որ Ընկերության հայտը Ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով մերժվել է, մի կողմից, Պատվիրատուի և Հանձնաժողովի մեղքով և

նրանց ոչ ճիշտ գործողությունների արդյունքում, իսկ, մյուս կողմից, հայտի մերժման հարցում Ընկերության մեղքը բացակայում է:»:

Ելնելով վերոգրյալից, «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ անվավեր ճանաչել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.03.2021թ.-ի որոշումը՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 10-րդ չափաթաժնի մասով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին:

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն 07.04.2021թ.-ի թիվ 17 գրությամբ ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեզ ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/24 ծածկագրով բողոքի հիմնական պահանջը այն է, որ սույն թվականի մարտի 16-ին «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումը, հրավերի 10-րդ չափաբաժնի մասով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ հայտը մերժելու մասին, անվավեր ճանաչել: Տեղեկացնում ենք, որ գնումների մասին օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն ներկայացրել ենք բողոք, բողոքներ քննող անձին առ այն, որ կատարվի պատշաճ քննություն, վերոնշյալ ընթացակարգի գործողությունների վերաբերյալ և հնարավորության պարագայում կայացվի որոշում մեր ընկերության օգտին: Դա կնպաստի ընկերության և պետության շահերի համընկմանը, որովհետև ինչքանով որ տեղյակ եմ, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 10-րդ չափաբաժնի՝ կաթսա ալյումինե/կոտելոկ-ը շտապ անհրաժեշտ է բանակին: Մեր ընկերությունը ունի 108 բաժնետեր, որոնք նախկին աշխատակիցներ են, սակայն չնչին քանակն է ներգրավված արտադրության մեջ, իսկ նշված ապրանքատեսականու պատվերը կատարելու ընթացքում աշխատակիցների քանակը կավելանա՝ հասնելով մինչև 45-ի: Շուրջ 3 տարի ապրանքատեսակը արտադրվում է մեր ընկերության կողմից և նախորդ 3 տարիներին կայացած Ընթացակարգների տեխնիկական բնութագրերում, կաթսա ալյումինե/ կոտելոկ-ի հաստության չափը նշված չի եղել: Սակայն մենք ստանձնել ենք պարտավորություն և մատակարարել ենք 1.5մմ հաստությամբ սննդային ալյումինե թիթեղից պատրաստված կաթսաներ: 2020թ-ի դեկտեմբերին ընկերությանը հանձնարարվեց մատակարարելու հնարավորինս քանակով ալյումինե կաթսա/կոտելոկ: Այս դեպքում տեխնիկական բնութագրի մեջ նշված էր հաստությունը 1.5մմ-ից ոչ պակաս: Պայմանագիրը կնքվեց և ապրանքը մատակարարվեց ժամանակին և պատշաճ որակով:Նախորդիվ Ձեզ ներկայացրել ենք նշված

պայմանագրերը: Կաթսայի հաստության փոփոխությունը կբարձրացնի ապրանքատեսակի ինքնարժեքը և կպահանջվի նաև 5-6 ամիս, որպեսզվի պատրաստվեն նոր գործիքներ, քանակով՝ 20 և ավելի հատ, որը ևս կավելացնի ապրանքի ինքնարժեքը: Հարկ եմ համարում նշել, որ Ընթացակարգի հայտի ապահովման համար մեր ընկերությունը «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ-ում սառեցրել է 1445500/Մեկ միլիոն չորս հարյուր քառասուն հինգ հազար հինգ հարյուր դրամ գումար և ընկերության գործունեության համար այս ծանր պայմաններում, հաշվի առնելով շուկայի սպառման կտրուկ անկումը, հայտի ապահովման համար սառեցված գումարի գանձումը ևս մեկ հարված կլինի մեր արտադրությանը և անշուշտ դա էլ իր հերթին կբարձրացնի ապրանքատեսակի ինքնարժեքը: Դեռ հայտերը չբացված, խնդրի մասին բանավոր տեղեկացրել ենք պատվիրատուին՝ ՀՀ ՊՆ Իրային ծառայությանը, որտեղից պատասխանեցին, որ տեղի է ունեցել տպագրական սխալ: Ուստի ելնելով դրանից գնահատող հանձնաժողովը կարող էր դիմել պատվիրատուին, վերջինս կփոխեր խնդրահարույց պայմանը և Ընթացակարգը կկայանար: Սակայն եղավ այն, ինչին որ ականատես ենք: Բողոքին կից, մենք ներկայացրել ենք պատվիրատուի կողմից 26.03.21թ N514/813 գրությունը առ այն, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրում կատարվել է գրասխալ: Վերջինս հիմք է հանդիսացել մեր հայտի մերժմանը: Կուզենայի նշել, որ մեր կողմից արտադրած ապրանքը չի զիջում արտասահմանյան նույնանման ապրանքներին, ավելին, համեմատության մեջ, նույնիսկ գերազանցում է, օրինակ Ռուսաստանի Դաշնությունում այս ապրանքատեսակը արտադրվում է 1.2մմ հաստությամբ, իսկ մեր կողմից արտադրվածը ունի 1.5մմ հաստություն, ուստի պարզ է որ ՀՀ-ում արտադրվածը որակական հատկանիշներով գերազանցում է և դեռ մի բան էլ ավելի մատչելի է: Հիշեցման կարգով նշեմ, որ մեր ընկերությունը շուրջ 29 տարի հիմնական մատակարարն է եղել՝ այլումինե, չժանգոտվող պողպատից, ցինկապատ թիթեղից պատրաստված խոհանոցային և տնտեսական ապրանքների մասով, և միշտ պատշաճ կերպով կատարել է իր առջև դրված պարտականությունները: ՀՀ ՊՆ-ի կողմից Ձեզ հասցեագրված գրությունում զետեղված է այն ինչ կա ընթացակարգում, սակայն պատճառները որոնք կօգնեին Ձեզ ճիշտ որոշում կայացնելու հարցում՝ նշված չեն: Հուսով ենք հաշվի կառնեք մեր կողմից ներկայացված հիմնավորումները և դրանք կօգնեն ի օգուտ տեղական արտադրողի որոշում կայացնելուն:»:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 31.03.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/4762-2021 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից 30.03.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 06.04.2021թ.-ին ներկայացված թիվ ՊՆ/02/1750-2021 գրությամբ ներկայացրել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնման ընթացակարգի համապատասխան փաստաթղթերի պատճենները և գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 31.03.2021թ. N /ԲՔԱ-ԼՕ/2/4762-2021 գրության՝ հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մետաղամանեղեն գործարան» ԲԲ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի հայտը գնահատելիս գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ էր բացառել /կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը:

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված էր/ Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5 մմ-ից ոչ պակաս/, այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում էր / Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս/:

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված չէր ապրանքի արտաքին մասը ներկված պաշտպանական գույնի ներկի հրակայունությանը վերաբերող բնութագրիչը, այնինչ սույն ընթացակարգի հրավերով պահանջվում է, որ ապրանքի Արտաքին մասը ներկված լինի պաշտպանական գույնի հրակայուն ներկով:

- չի ներկայացվել ընթացակարգի հրավերի բանկային երաշխիքի (հավելված 3) 5-րդ կետով պահանջված տեղեկատվությունը՝ (Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին):

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել էր հայտերի գնահատման նիստը և 12.03.2021թ. ծանուցել էր Մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկելու անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին ստացվել է Մասնակցի կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկման փաստաթղթերը՝ Հավելված 1.1 և բանկի պաշտոնական էլ. փոստից ծանուցում, որոնց ուսումնասիրման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է հետևյալ անհամապատասխանությունները՝

Ընթացակարգի հրավերում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է <Պատրաստվում է սենդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս>, իսկ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ <Պատրաստվում է սենդային ալյումինից, հաստությունը 1.5-2մմ>, այսինքն Մասնակցի առաջարկած տեխնիկական բնութագիրը տվյալ չափորոշիչի մասով չի համապատասխանում ընթացակարգի հրավերով պահանջվող տեխնիկական բնութագրին:

- Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է <Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք>, այնինչ անհրաժեշտ էր բացառել /կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը գնահատող հանձնաժողովը մերժել է «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ հայտը ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/24 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 24.02.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 10-րդ չափաբաժնով նախատեսվել է նաև, որ ալյումինե կաթսան պատրաստվում է սննդային ալյումինից՝ հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս.....:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 10-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել միայն «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն:

iv. Ընկերությունը հայտով ներկայացված թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է, որ ալյումինե կաթսան պատրաստվում է սննդային ալյումինից՝ հաստությունը 1.5մմ-ից ոչ պակաս.....:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ ի թիվս այլ անհամապատասխանությունների, արձանագրվել է նաև, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է բացառել /կամ համարժեք/ արտահայտությունը՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում նշված է /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5 մմ-ից ոչ պակաս/, այնինչ գնման ընթացակարգի հրավերով պահանջվում է /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս/:

vi. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է 12.03.2021թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները:

vii. «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված անհամապատասխանության շտկման փաստաթղթերում Հանձնաժողովը արձանագրել է, որ Ընթացակարգի հրավերի 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս/, իսկ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5-2մմ/, ինչպես նաև նույն չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է /Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք/, այնինչ անհրաժեշտ էր բացառել /կամ համարժեք/ արտահայտությունները՝ հստակեցնելով առաջարկվող ապրանքի տեխնիկական պարամետրերը:

viii. Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, 16.03.2021թ.-ին որոշել է Ընկերության հայտը ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով մերժել և նույն չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

ix. «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն 25.03.2021թ.-ին թիվ 12 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի մարտի 3-ին «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով մրցույթին: Հրավերի 10-րդ չափաբաժնի մասով, այն է՝ կաթսա ալյումինե (կոտելոկ), մեր հայտը մերժվել է տեխնիկական պարամետրերի անհամապա-տասխանության պատճառաբանությամբ: Պարզաբանում եմ, որ շուրջ երեք տարի մասնակցում ենք տվյալ ապրանքատեսակի համար նախատեսված մրցույթին և երեք տարին էլ ապրանքատեսակը արտադրել է մեր ընկերությունը, որը համապատասխանել է առաջարկվող տեխնիկական պահանջներին և ի՞նչ խոսք, հաստատվել նմուշները պատվիրատու՝ իրային վարչության կողմից: Ինչպես գիտեք վերջնական որոշումը կայացնելու է բողոքներ քննող անձը, ուստի մեզ անհրաժեշտ է իմանալ թե ի՞նչ հիմունքներով է փոփոխության ենթարկվել կաթսա ալյումինե (կոտելոկ)-ի տեխնիկական պարամետրերը, քանի որ երեք տարի շարունակ օգտագործվել է և կարելի է համարել, որ անցել է փորձության շրջանը: Նշեմ, որ ռուսական նույնատիպ կաթսայի պատի հաստությունը 1.2մմ է, որը դժվար չէ չափագրել, իսկ պաշտպանիչ ներկը մինչև 100°C հրակայուն ներկ է, որը բավարար է նույնիսկ կրակի վրա թեյ պատրաստելու համար, ինչը փորձարկվելն հաստատվել է մեր լաբորատորիայի կողմից:

Ելնելով վերոհիշյալից՝ խնդրում եմ Ձեր միջամտությունը, պարզելու թե պատվիրատուն ի՞նչ աղբյուրից է օգտվել, տեխնիկական բնութագիրը կազմելու համար և արդյո՞ք այն չի ավելացնի ինքնարժեքը, նաև ի՞նչն է պատճառը, որ կաթսան պետք է ավելի հաստ ալյումինից պատրաստվի, պաշտպանիչ ներկն էլ ջրի եռման ջերմաստիճանից ավելի բարձր ջերմաստիճանի պիտի դիմանա: Քանի որ պետական գնումը պիտի բոլոր մասնակիցների համար հավասար պայմաններում անցկացվի, ուստի արդյո՞ք այդ փոփոխությունները կնպաստեն դրան և մրցույթի բարեհաջող կայացմանը, իսկ տուժողը տվյալ պարագայում լինելու է տեղական արտադրողը: Եթե հնարավոր համարեք որ գուցե պատվիրատուի կողմից կա սխալ թեկուզ և տպագրական, խնդրում ենք գրություն գրել, մեզ սպասարկող «Արդշինբանկ» ՓԲԸ-ին, հայտի ապահովման համար նախատեսված գրավ դրված գումարը, մեզ ետ վերադարձնելու համար:»:

x. Ի պատասխան Ընկերության վերոնշյալ գրության, ՀՀ պաշտպանության նախարարությանը 26.03.2021թ.-ին թիվ 514/813 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության 2021թ.-ի գնումների պլանի շրջանակներում ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչություն ներկայացված «կաթսա (կոտելոկ)» ապրանքատեսակի գնման հայտի տեխնիկական բնութագրում (գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ԳՀԱՊՁԲ-21-7/10) կատարվել է գրասխալ՝ «հաստությունը 1.5-2մմ ոչ պակաս» բառակապակցության փոխարեն տպագրվել է «հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից 30.03.2021թ.-ին ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Ընթացակարգին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275 փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի

(այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից 24.02.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ապրանքների ձեռքբերման նպատակով 24.02.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 10-րդ չափաբաժնով նախատեսվել է նաև, որ ալյումինե կաթսան պատրաստվում է սննդային ալյումինից՝ հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս.....: Ընթացակարգին մասնակցելու նպատակով, 10-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած միակ մասնակից «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ն թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, որպես առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիր նշել է, որ ալյումինե կաթսան պատրաստվում է սննդային ալյումինից՝ հաստությունը 1.5մմ-ից ոչ պակաս.....: Հանձնաժողովի 15.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետի համաձայն՝ ի թիվս այլ անհամապատասխանությունների, արձանագրվել է նաև, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում 10-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում լրացվել է /կամ համարժեք/ արտահայտությունը, ինչպես նաև տեխնիկական բնութագրում նշված է /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5 մմ-ից ոչ պակաս/, ինչով պայմանավորված, Հանձնաժողովը որոշել է 12.03.2021թ.-ին մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և առաջարկել Ընկերությանը շտկելու արձանագրված անհամապատասխանությունները: Սակայն «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված անհամապատասխանության շտկման փաստաթղթերում Հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 1.1-ում նշված է՝ /Պատրաստվում է սննդային ալյումինից, հաստությունը 1.5-2մմ/, ինչպես նաև նույն չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է /Արտաքին տեսքը համաձայն նկարի կամ համարժեք/:

Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է Ընկերության հայտը ընթացակարգի 10-րդ չափաբաժնի մասով մերժել և նույն չափաբաժնի մասով ընթացակարգը հայտարարել չկայացած:

«Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի 25.03.2021թ.-ին թիվ 12 գրության ի պատասխան, ՀՀ պաշտպանության նախարարությանը 26.03.2021թ.-ին թիվ 514/813 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության 2021թ.-ի գնումների պլանի շրջանակներում ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչություն ներկայացված «կաթսա (կոտելոկ)» ապրանքատեսակի գնման հայտի տեխնիկական բնութագրում (գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ԳՀԱՊՁԲ-21-7/10) կատարվել է գրասխալ՝ «հաստությունը 1.5-2մմ ոչ պակաս» բառակապակցության փոխարեն տպագրվել է «հաստությունը 2 մմ-ից ոչ պակաս»:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Ընկերության կողմից բանավոր ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, ուսումնասիրելով 10-րդ չափաբաժնի մասով գնման առարկա հանդիսացող ապրանքի տեխնիկական բնութագիրը, այն համադրելով Ընկերության կողմից նույն չափաբաժնի համար առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրի հետ, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից կայացված թիվ 3 արձանագրությունը, շտկման վերաբերյալ Ընկերությանն ուղարկված ծանուցումը ու վերջինիս կողմից ներկայացված անհամապատասխանությունների շտկված տարբերակը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից թիվ 1.1 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագիրը համապատասխանել է Հրավերի 10-րդ չափաբաժնով սահմանված տեխնիկական պայմաններին, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության 26.03.2021թ.-ին թիվ 514/813 գրությամբ ներկայացված տեղեկատվությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընկերության հայտը մերժելով չի ապահովվում Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքների պահանջների կիրառումը (գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում, մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում, ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն), քանի որ ՀՀ ԶՈՒ ԹՎ իրային ծառայության 2021թ.-ի գնումների պլանի շրջանակներում ՀՀ

ՊՆ նյութատեխնիկական ապահովման գլխավոր վարչություն ներկայացված «կաթսա (կոտելոկ)» ապրանքատեսակի գնման հայտի տեխնիկական բնութագրում կատարված գրասխալի արդյունքն է հանգեցրել Ընկերության հայտը մերժելու մասին որոշում կայացնելուն:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն և Հանձնաժողովը գնման գործընթացի մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնելիս չպետք է վերջիններին ծանրաբեռնեն այնպիսի պարտականություններով, որոնք ուղղված են ձևական պահանջների պահպանմանը, կամ, առավել ևս, մերժեն ներկայացված հայտերը, եթե մասնակիցների վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Ինչպես Օրենքի իմաստից է բխում, որ գնման գործընթացի շրջանակներում ներկայացված հայտերի գնահատումը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

Սույն դեպքում, Հանձնաժողովը, արձանագրելով անհամապատասխանություն, Մասնակցի վրա դրել է ոչ իրավաչափ պարտականություն, այն է՝ առաջարկել է շտկել այնպիսի անհամապատասխանություն, որն առկա չէր՝ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության 26.03.2021թ.-ին թիվ 514/813 գրությունը: Դրանով պայմանավորված՝ Հանձնաժողովի կողմից «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի մասով կայացված հայտը մերժելու մասին որոշումը ոչ իրավաչափ է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի ներկայացրած հայտը համապատասխանում է թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով ընթացակարգի Հրավերի պայմանագրի հավելված 1-ով՝ 10-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջներին, հատկապես երբ՝ Պատվիրատուի կարիքը եղել է Հրավերի 10-րդ չափաբաժնով նախատեսված՝ առնվազն

1.5-2մմ հաստությամբ այլումինե կաթսայի (կոտելոկ) ձեռքբերումը, որպիսի պայմաններում, Ընկերության կողմից ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի կողմից 07.04.2020թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/24 ծածկագրով բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/10» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 16.03.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Մետաղամանեղեն գործարան» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**